Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 16-ի N 1530 - Ն որոշման

ՈՐՊԵՍ ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԵՐԻ) ԵՎ (ԿԱՄ) ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ, ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏԻ ՏԱՐԱԾՔԻ ՑԱՆԿԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ԵՐԿԱՅՆՔՈՎ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ազատ պահեստների ընդհանուր մակերեսը պետք է լինի առնվազն 1000 քառ. մետր:

2. Ազատ պահեստների շինությունները, տարածքները (տարածքների մասերը) և (կամ) բաց հրապարակները պետք է սարքավորված լինեն այնպես, որ ապահովվի ապրանքների պահպանվածությունը, բացառվի կողմնակի անձանց մուտքը, ինչպես նաև ապահովվի ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության իրականացման հնարավորությունը:

3. Ազատ պահեստներին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

1) ազատ պահեստների սանիտարահիգիենիկ պայմանները, շինություն-ների պահպանության պահնորդաազդանշանային և հրդեհային անվտանգության պահանջները.

2) անվտանգության ծառայության (սեփական կամ վարձված) առկայությունը՝ ազատ պահեստների տարածքի պաշտպանությունն իրականացնելու համար.

3) ազատ պահեստների համար նախատեսված շենքերի, տարածքների և հրապարակների առանձնացումը, պարսպապատումը կամ ցանկապատումը, ինչպես նաև ազատ պահեստների կառուցումն այնպես, որ ապահովվի մաքսային մարմինների կողմից ազատ պահեստների տարածքում իրականացվող գործունեության նկատմամբ մաքսային հսկողության իրականացումը, բացառվեն մաքսային հսկողությունից դուրս ապրանքների ստացման և ազատ պահեստներից դրանց դուրսբերման հնարավորությունը.

4) ապրանքների պահպանության համար նյութատեխնիկական սարքավորումների առկայությունը, այդ թվում՝ բեռնման-բեռնաթափման և տրանսպորտային միջոցների, պահեստային տնտեսության համար անհրաժեշտ սարքավորումների (կշռող, տեղադրող, տեղափոխող, օդափոխիչ), կապի և այլ միջոցների առկայությունը, տեխնիկական պահանջներին դրանց համապատասխանությունը.

5) մաքսային մարմինների համար համապատասխան տարածքների և պայմանների, ներառյալ համապատասխան սարքավորումների առկայությունը՝ մաքսային հսկողություն իրականացնելու և մաքսային ձևակերպումներ կատարելու նպատակով.

6) պահպանման առանձնահատուկ պայմաններ պահանջող (շուտ փչացող և կոտրվող, խոնավության և ջերմաստիճանի որոշակի ռեժիմ պահանջող, դյուրավառ, շրջակա միջավայրին վնաս պատճառող) ապրանքների համար հատուկ առանձնացված և հարմարեցված շինությունների կամ սարքավորումների առկայությունը.

7) ապրանքների հաշվառման և մաքսային մարմիններին հաշվետվությունների տրամադրման ավտոմատացված համակարգերի առկայությունը.

8) հսկիչ-անցագրային կետերի առկայությունը:

4. Ազատ պահեստի պարսպապատմանը և ցանկապատմանը ներկայացվում են հետևյալ տեխնիկական պահանջները՝

1) պարիսպը պետք է պատրաստված լինի քարից, բետոնից կամ այլ նյութից, որն ապահովում է տարածքի մեկուսացվածությունը.

2) պարսպի բարձրությունը պետք է լինի 2.5 մետրից ոչ պակաս.

3) պարիսպը պետք է լինի անընդհատ ամբողջ շրջագծով՝ բացառությամբ ֆիզիկական անձանց մուտքի, ելքի, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների ներմուծման, արտահանման համար նախատեսված անցագրային կետերի.

4) պարսպի ամբողջ երկայնքով պետք է տեղադրված լինեն տեսախցիկներ, այնպիսի հեռավորությամբ, որ հնարավոր լինի ապահովել ամբողջ տարածքի տեսանելիությունը.

5) պարիսպը պետք է լինի երկկողմանի լուսավորված (դրսից և ներսից):

5. Ազատ պահեստի բաց հրապարակները պետք է լինեն ասֆալտապատված կամ բետոնապատված:

6. Ազատ պահեստ համարվող շենքը կամ շենքի հատվածը պետք է արտաքինից լինի լուսավորված:

7. Ազատ պահեստ համարվող շենքում կամ շենքի այդ հատվածում պետք է տեղադրված լինեն տեսահսկողության միջոցներ, որոնց տեսանելիության ներքո գտնվի ամբողջ շենքը կամ դրա հատվածը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17.09.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ